ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԱՃ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «24» 12. 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊՇ ՄՊ և Պ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության ՆՏՄ գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Վարդանյան)

1.ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.12.2018թ. կայացրած և 17.12.2018թ. հրապարակված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/105 որոշումը քննարկելու և Ա/Ձ Համլետ Հովսեփյանին մերժելու որոշումը դադարեցնելու մասին

2. Հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը չքննարկելու և լիազորված մարմնին տեխնիկական շտկման մասին հայցով դիմելու մասին

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.12.2018թ. կայացրած և 17.12.2018թ. հրապարակված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/105 որոշումը քննարկելու և Ա/Ձ Համլետ Հովսեփյանին մերժելու որոշումը դադարեցնելու մասին

(Գ. Վարդանյան)

1.1 Ա/Ձ Համլետ Հովսեփյանը 05.12.2018թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ֆինանսական միջոցներ չափանիշի անբավարարության հիմքով մերժելու և դրա հիման վրա շտկում ներկայացնելու պահանջը, պահանջել է դադարեցնել իրեն մերժելու մասով կայացված որոշումը, իսկ դրա բացակայության դեպքում չկայացնել այդպիսի որոշում, իսկ գնահատող հանձնաժողովը կասեցրել էր որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը՝ մինչև ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԱՆՁ-ի կողմից որոշման կայացում: 17.12.2018թ. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԱՆՁ-ի կողմից հրապարակված գրության համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի **14.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/105** որոշմամբ բավարարվել է: Ուստի հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի վերոնշյալ որոշումը՝ հանձնաժողովը որոշեց դադարեցնել Ա/Ձ Համլետ Հովսեփյանին մերժելու մասով կայացված որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը չքննարկելու և լիազորված մարմնին տեխնիկական շտկման մասին հայցով դիմելու մասին

(Գ. Վարդանյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց գրությամբ դիմել Լիազորված մարմնին, eauction.armeps.am համակարգում 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պահանջը չեղարկելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում խնդրի լուծման համար տարբերակ առաջարկելու մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(Գ. Վարդանյան)

3.1 Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել Լիազորված մարմնի կողմից տեխնիկական շտկում կատարելու կամ խնդրի լուծման մասով որոշում կայացնելու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Վ. Ասատրյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար Գ. Վարդանյան